

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»
Հ. Ներսիսյան 10/7, Երևան 0014,
+374 12345678

«Ուիգմոր ընտանիքի առողջության կենտրոն»
Պուշկին 56, Երևան 0002, Հայաստան
+374 12345677

www.wigmore.am

ԿՐԻՊՏՕՐԽԻԶՄ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

WIGMORE

Ի՞ՆՉ Է ԿՐԻՊՏՈՐԽԻԶՄԸ (ՉԻՋԱԾ ԱՄՈՐՁԻ)

Տղա երեխայի մոտ զույգ ամորձիները պետք է տեղակայվեն փոշտի (ամորձապարկի) մեջ: Հղիության ընթացքում պտղի մոտ ամորձիները սկզբում ձևավորվում են որովայնում, ապա իջնում և տեղակայվում են փոշտի մեջ: Երբ այս գործընթացը խանգարվում է, երեխայի մոտ դիտվում է զարգացման արատ՝ կրիպտորխիզմ Այն կարող է լինել միակողմանի կամ երկկողմանի:



Ի՞ՆՉ Է ԿԵՂԾ ԿՐԻՊՏՈՐԽԻԶՄԸ

Որոշ դեպքերում նորմալ իջած և փոշտում տեղակայված ամորձին կարող է բարձրանալ վեր՝ ստեղծելով կրիպտորխիզմի տպավորություն: Դա պայմանավորված է ամորձին բարձրացնող մկանի տոնուսի բարձրացմամբ: Այս երևույթը կոչվում է կեղծ կրիպտորխիզմ: Սա համարվում է նորմալ և չի պահանջում որևէ միջամտություն: Կեղծ կրիպտորխիզմը սովորաբար ինքնուրույն անցնում է մինչ երեխայի սեռահասունացման տարիքը:



ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԻՊՏՈՐԽԻԶՄԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Կրիպտորխիզմի դեպքում փոշտում բացակայում է մեկ կամ երկու ամորձին (դատարկ փոշտ):
Այդ կողմից փոշտը չափերով փոքր է, թերզարգացած, ծալքերը հարթված են:

Ե՞ՐԲ ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

Երեխայի մոտ փոշտում ամորձու կամ ամորձիների բացակայության դեպքում անհրաժեշտ է դիմել մանկական վիրաբույժի:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱԽՏՈՐՈՇՎՈՒՄ ԵՎ ԲՈՒԺՎՈՒՄ ԿՐԻՊՏՈՐԽԻԶՄԸ

Ախտորոշման համար կատարվում է մանկական վիրաբույժի կողմից զննում և սոնոգրաֆիկ հետազոտություն: Երկկողմանի կրիպտորխիզմի դեպքում իրականացվում է նաև մանկական էնդոկրինոլոգի խորհրդատվություն:

ԲՈՒԺՈՒՄ

Կրիպտորխիզմի բուժումը միայն վիրահատական է: Կրիպտորխիզմի վիրահատության համար լավագույն տարիքը 6 ամսականից մինչև 1,5 տարեկանն է: Վիրահատությունը կատարվում է ընդհանուր անզգայացման պայմաններում:

ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...

WIGMORE